«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Կարենի Նասիբյան

Ուսումնական հաստատություն՝Արարատի մարզի Դաշտավան գյուղի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 2-3

Գլուխ 1 Տեխնոլոգիաների տարածվածությունը մեր դարաշրջանում և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում----------4-13

Գլուխ 2 Տեխնոլոգիայի և մարդկության ապագան----------14-17

Վերջաբան----------18-19

Օգտագործված գրականության ցանկ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում» աշխատանքի հրատապությունը և խիստ արդիականությունը պայմանավորված է նրանով,որ արդեն 21-րդ դարում դյվար է պատկերացնել մեր կյանքն առանց բարձր զարգացած տեխնոլոգիաների ընդհանրապես և անհրաժեշտություն է առաջանում տվյալ հիմնախնդրի լուրջ ուսումնասիրության, ինչպես նաև մշակութաբանական և հոգեբանական վերլուծության, քանի որ ցանկացած տեխնոլոգիա մշակութ է և հանդիսանում է ուսումնասիրության առարկա նաև հոգեբանության տեսանկյունից, առավել ևս տեղեկատվական տեխնոլոգիաները:Ավելին, Համաշխարհային Ոստը (WWW) այսօր դիտարկվում որպես մեր ժամանակի գլխավոր մշակութային տեխնոլոգիա:Տեխնոլոգիաներն այն աստիճան են ներխուժել հասարակական կյանքի բոլոր բնագավառները, դրանցում արմատական փոփոխությունների արգասիք հանդիսացել,որ կատարվածը կարելի է համեմատել միայն հեղափոխության հետ:Այսօր մենք ամենուր շրջապատված ենք մեքենաներով և թվում է, թե մարդուն ոչինչ հարկավոր չէ՝ ո՛չ ձեռքեր, ո՛չ ոտքեր,նրան պետք է միայն մեքենան:

Տեխնոլոգիաները մի կողմից թեթևացնում են մարդում կյանքը՝ նրա փոխարեն կատարելով ողջ ծանր աշխատանքը, սակայն մյուս կողմից չմոռանանք,որ այս ամենը հղի է վտանգներով,որ կարող է մարդու մեջ ծնել ծուլություն.այսօր ոչինչ չանելը (միայն գործողությունների ղեկավարումը) վաղը կարող է բերել արդեն այդ աշխատանքների նկատմամբ անճարության և անկարողության, իսկ սա էլ կբերի կյանքի իմաստազրկմանը և հոգեբանական ընկճախտին:

հոգեբանական ընկճախտին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հետևանքները խոր են այնքանով, որ մարդկային կյանքի և ոչ մի ոլորտ զերծ չէ այդ ազդեցությունից: Առավել ևս հոգեբանական ոլորտը, երբ այս ամենը ուղղակիորեն ազդում է անհատի հոգեբանական զարգացման վրա: Զարգացման նման տեմպերի պայմաններում

հարկավոր է յուրացնել նոր գիտելիքներ, որոնք կօգնեն կոնկրետ ազդել տարբեր ազդակների՝ հատկապես հոգեբանական կողմի վրա: Առաջանում է նման հիմնախնդիր՝ կրթության հոգեբանական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում, տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում:

Այսպիսով՝մեր հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հենց սովորողի հոգեվիճակի վրա:

Երկրագունդը առավել նպատակասլաց վեր է ածվում մի մեծ էլեկտրոնային գյուղի՝ բոլորը բոլորի մասին ամեն ինչ գիտեն և այդ գործում ոչ վերջին դեր է խաղում կապի բջջային համակարգը,իսկ բջջային հեռախոսները ունակ են ապահովել տառացիորեն վայրկենական կապը մեզ հետաքրքրող ցանկացած բաժանորդի հետ և սա մեր կյանքում դարձել է բացարձակ անփոխարինելի:

Ռադիոյի և հեռուստացույցի մասին խոսելիս էլ կարելի է անդրադառնալ «գլոբալ գյուղ» հասկացությանը:Իրապես հեռուստացույցը գլոբալ մի գյուղ է, ինչպես գյուղում մեկի ասածը լսում են բոլորը, այդպես էլ հեռուստացույցի միջոցով նույն ակնթարթում համայն մոլորակը կարող է դիտել նույն բանը:Եվ այդ իմաստով է, որ գլոբալ գյուղ է առաջանում և հեռուստացույցի միջոցով հասարակությունը միավորվում է:Ռադիոյի և հեռուստատեսության դարաշրջանում տարբեր տարիքի մարդկանց մեջ, տարբեր սեռերի մեջ բաժանումները հաղթահարվեցին, դրանք սկսեցին աղոտանալ:Հեռուստացույցը փոխում է մարդուն, դրան բնորոշ է առավելություն տալ էմոցիաներին բանականության և փաստարկների նկատմամբ:Իսկ համակարգիչների տարածումը արդեն ակնհայտ փոփոխություններ է հարուցել կրթության և մշակույթի բանգավառներում՝ առաջ բերելով «Համակարգչային մշակույթի» (,,Computer Culture,,) մի համատարած շերտ:Համակարգիչը նոր ուղիներ է բացում մտածողության զարգացման համար, հնարավորություն է ստեղծում ակտիվ ուսուցման,ինչն էլ ավելի է պարզեցնում սովորողի գործը, իսկ սա էլ իր հերթին ազդում է հոգեկերտվածքի վրա:

ԳԼՈՒԽ 1. Տեխնոլոգիաների տարածվածությունը մեր դարաշրջանում և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Եթե մեզանից շատերին հարցնեն,թե ինչ է գլոբալիզացիան, այս հարցին կպատասխանենք որոշակի վերապահումով:Մարդկանց մեծամասնության համար այս երևույթը առավել աբստրակտ և առօրյա կյանքից հեռու իրողություն է:Սակայն որն է գլոբալիզացիայի բուն էությունը, որն այսօր այդքան շատ շահարկվում է:

Գլոբալիզացիան համաշխարհային ինֆորմացիոն տարածության էվոլուցիան ձևակերպումն է՝ հիմնված նոր տեխնոլոգիաների արմատավորման վրա:

Համաշխարհային հանրությունն այսօր թևակողում է զարգացման նոր փուլ՝ ձևավորելով տեղեկատվական համակարգ,որի հիմանական առանձնահատկություններից են տեղեկատվության և գիտելիքի դերի բարձրացումը հասարակական կյանքում, տեղեկատվական, կոմունիկացիոն և գիտարար ապրանքների տեսակարար կշռի ավելացումը,տեղական և համաշխարհային տեղեկատվական համակարգերի ձևավորումը:Տեղեկատվական հասարակարգի ձևավորման արդյունավետության տեսակետից կարևորում են փոխանակվող տեղեկատվության որակական հատկանիշները,որոնք են՝ կայունությունը,արագություն,անվտանգությանուն,մատչելիության:Սրանք այն հատկանիշներն են, որոնք ուղղակիորեն ազդում են նոր ժամանակների մարդու հոգեբանության վրա:

Գործողությունները ձևավորում են հանգամանքները,բնությունը և արդյունքում հայտնվում է այն, ինչ չի եղել մինչ այժմ:Դե հենց տեխնիկական գործողություններ են՝ բնորոշ բացառապես մարդուն:Իսկ այդ գործողությունների ամբողջությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ տեխնիկա,որը կարելի է ձևակերպել իբրև մարդու կողմից բնություն՝ ձևափոխումը պահանջմունքների բավարարման նպատակով[1]:Տեխնիկան մարդու ռեակցիան է բնությանը կամ հանգամանքներին, որի արդյունքում մի կողմից բնության շրջապատի, մյուս կողմից էլ մարդու միջև առաջանում է գերբնություն կամ նոր բնություն:Պետք է ընդգծել,որ տեխնիկան ամենևին էլ գործողություն չէ,որոնք մարդը

իրականացնում է,որպեսզի բավարարի պահանջմունքները:Այսպիսի ձևակերպումը որոշակի չէ, անի որ այն հարմար է կենդանիների զուտ կենսաբանական գործողություններին: Տեխնիկական բնության վերանձնավորումն է, վերափոխումը:

Մարդը առանց տեխնիկայի,այլ կերպ ասած՝ մարդ,ով չի արձագանքում սեփական միջավայրին, մարդ չէ[2]:

Այժմ կրկին վերադառնանք «պահանջմունք» բառին:Այն կարիք է զգում հստակեցման.ապրել,գտնվել աշխարհում, ահա պահանջմունքների պահանջմունքը:Մարդը ամենևին էլ ոչ քիչ քանակությամբ չի ձգտում իրեն պարգևել ինչ-որ հաճույքներ,քան պարզապես բավարարել այն նվազագույն պահանջմունքները, որոնցից բաղկացած է կյանքը:

Եթե մենք նպատակ ունենայինք բաղդատել պահանջմունքները ըստ խիստ անհրաժեշտության և բացառեինք պահանջմունքները, առանց որոնց թվում է մարդը կարող է գոյատևել, ապա մենք թյուրիմացության մեջ կհայտնվեինք:Այլ կերպ ասած մենք անխուսափելիորեն կգնանք հետևյալին՝

1. Մարդուն բնորոշ է անսովոր ճկունություն այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են ամենաանհրաժեշտ և էլեմենտար պահանջմունքներին,այսինքն, ինչպիսիք են սննդի, ջերմության և այլն:
2. Մրդուն երբեմն դժվար է լինում,իսկ երբեմն անգամ անհնարին է լինում հրաժարվել ավելորդ «ճոխությունից» և դրա համար էլ նա կարող է նախընտրել մահը, քան անբավարարություն զգալ[1]:
3. Այստեղից պարզ է մարդու կյանքի ծարավը, նրա ձգտումը լինել աշխարհում, կապված է լավ և հարմարավետ կյանքի ձգտման հետ:Ավելին, մարդու համար հենց կյանքը նշանակում է բարեկեցություն,այլ կերպ ասած արժանապատիվ, հարմարավետ գոյություն::

Եթե մարդը վերջնականապես համոզվի,որ ինքը չի կարող հասնել բարեկեցության, ծայրահեղ դեպքում գեթ հարաբերական բարեկեցության և եթե նա ստիպված պետք է սահմանափակվի աշխարհում պարզ գոյությամբ, ինքնասպանություն կգործի:

Վերևում մարդկային պահանջմունքների թվին դասեցինք ջերմությունը և սնունդը, քանի որ դրանք կազմում են կյանքի օբյեկտիվ պայմանները:Վերոհիշյալ պահանջմունքները պարտադիր են,քանի որ մարդուն անհրաժեշտ է ապրել:Սակայն մարդու ճշմարտացի կոչումն է գտնվել,գոյություն ունենալ աշխարհում հարմարավետությամբ և բարեկեցությամբ իր համար:

Իսկ կրթությունը՝ իբրև առանձնահատուկ գործունեություն,բնականաբար չի կարող հեռու մնալ այս գործընթացից:Իսկ սա էլ իր հերթին ազդում է սովորողի հոգեբանության վրա:Մանկավարժության և հոգեբանության տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները:

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ:Ինչպես արդեն նշվել է, տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան և կրթության և կրթական ծառայությունների ինտեգրումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման վրա:

Այսպիսով մարդ այնպիսի կենդանի է,որին հարկավոր է չափից ավելին:Տեխնոլոգիաները «հավելյալ» արտադրություն են ինչպես այսօր, այնպես էլ պալեոլիթյան ժամանակաշրջանում:Այն անկասկած ծառայում է պահանջմունքների բավարարմանը:Մարդ «ապրել» ասելով հասկանում է «լավ ապրել»:

Պարզագույն գոյության տեսանկյունից կենդանուն հարկավոր չեն տեխնոլոգիաները:Բայց մարդը մարդ է միայն նրա համար,քանի որ գոյությունը նրա համար անքակտելիորեն կապված է բարեկեցության հետ:Մարդու գերառատության տեխնիկան արարիչն է:Վերջին հաշվով ինքը մարդը, տեխնոլոգիաները և բարեկեցութնը հոմանիշներ ե ն:Մարդկային կյանքը և ամեն ինչ վերաբերվում է դրան:Չխոսենք միայն տեխնոլոգիաների մասին իբրև բացառիկ դրական երևույթ,իբրև միակ իր ձևի մեջ, անփոխարինելի և հստակ մարդկային իրականություն:

Ավանդական տեխնիկան կարող է փչանալ, կործանվել և այլ ուղղվածություն ստանալ:

1. Չկա մարդ առանց տեխնիկայի
2. Տեխնիկական ծայրաստիճան փոփոխական է և անկայուն, ամբողջովին կախում ունի պատկերացումներից, որոնք յուրաքանչյուր պատմական դարաշրջան մեզ բերում են հարաբերական բարեկեցություն:Պլատոնի դարաշրջանում չինական տեխնիկան գերազանցում էր հունականին:
3. Եվս մեկ հարց,որը խիստ կարևոր է՝ օժտվա՞ծ էր արդյոք անցյալ դարերի տեխնիկական ինչ-որ ընդհանուր բանով կամ արդյոք նրա տարատեսակների մեջ եղել է համընդգրկող ճյուղ, որի զարգացումը

տալիս է նոր բացահայտումներ, չնայած անտարակույս ոչ քիչ սխալների, ռեգրեսի, կորուստների գնով:[1]

Ցանկացած տեխնոլոգիա ունի որոշիչ հատկանիշներ, այն փորձում է թեթևացնել կյանքը:Տեխնոլոգիան նվազագույն ջանքն է,որի օգնությամբ հնարավոր է լինում պահպանել շատը:Այժմ մենք անխուսափելիորեն բախվում ենք մի այլ՝ ոչ պակաս կարևոր խնդրի:Եթե մարդ տեխնոլոգիայի միջոցով ձերբազատվում է շտապ գործերը կատարելու անհրաժեշտությունից (քանի որ դա նրա փոխարեն անում է տեխնիկան),ապա ինչպե՞ս նա պետք է լցնի իր ազատ ժամանակը, քանի որ ոչինչ չանել նշանակում է դատարչել կյանքը՝ այսինքն չապրել:Տեխնոլոգիաները «թույլ կտան» չարչարվել մարդուն օրական մեկ կամ երկ ժամից ոչ ավել:Այդ դեպքում ի՞նչ պետք է մարդ անի մնացած ժամանակ:Փաստացի նման իրականությունը արդեն իրողություն է:Եթե սովորաբար աշխատանքային օրը տևում է 8 ժամ,իսկ մարդիկ աշխատում են միայն շաբաթվա 5 օրը, ապա մոտ ապագայում աշխատանքային շաբաթը կկրճատվի և կդառնա 4 օր:Ինչպե՞ս տնօրինել ժամանակը, ինչպե՞ս լցնել այդ դատարկությունը:

Հետաքրքիր է,բայց էսքիլեսը նույնպես դեռևս իր ժամանակի համար հասել էր բարձր գիտակցությանը այն բանի, որ մարդու համար դրական կողմը: Նա օինակ է բերում Պրոմեթևսին:Վերջինս կարողացավ կրակը բերել միայն հանցագործություն կատարելով՝ գողանալով այն աստվածներից:

Տեխնոլոգիաների զարգացման մեջ իրարամերժությունը, հակասական բնույթը,որով պայմանավորված է ժամանակակից հասարակության կյանքը, նշանավորվում է որպես գիտատեխնիկական հեղափոխության սկիզբ, որը նշանակում է աշխատանքի և գիտելիքի միավորում, կոնֆլիկտների լուծում:Առաջինը այս փուլ մտել է ԱՄՆ-ն՝ 1914-1929 թթ-ին, հետո Արևմտյան Եվրոպան՝ 1930-1950-ական թթ-ին, Ճապոնիան՝ 1950-1960 թթ-ին, ապա հեռավոր Արևելքի մի շարք փոքր պետություններ:[1]

Առաջին փուլը պայմանական կոչում է գործարքային, որը բնութագրվում է նախ և առաջ ձեռքի աշխատանքային գործիքների օգտագործումով:Աշխատանքը գլխավորապես ձեռքով է, իսկ նրա գործիքների օգտագործումով:Աշխատանքը գլխավորապես ձեռքով է, իսկ նրա գործիքները ծառայում են ձեռքի շարունակություն և ուժեղացում:Տեխնոլոգիական գործընթացը ամբողջովին կախվածության մեջ է ստեղծագործ մարդու ակտիվությունից, անբաժան է նրանից, կախված է նորամուծություններից:Ռացիոնալության օբյեկտ կատարում

է գործիքը և գործիքային տեխնոլոգիան:Մարդը, դեռևս հեթանոսության բնական ներդաշնակությանը պատկանող անձ, իր վրա պատասխանատվություն չի վերցնում իր մշակույթի ռացիոնալության համար, չի խախտում տիեզերական կոնտինուումի ներդաշնակությունը:Մշակույթը, սովորույթները, միֆերը տրանսցենդենտ են, նրանց մեջ չի թափանցում ռացիոնալ մտածելակերպը:

Երկրորդ փուլը կապված է մեքենայի աշխատանքի ի հայտ գալու հետ:Արտադրող մարդը լրացնում է տեխնոլոգիական գործընթացը, դառնում է մեքենայի շարքում նրա էլեմենտներից մեկը:[2] Տեխնոլոգիական գործընթացի ծանրության կենտրոնը աստիճանաբար թեքվում է մեքենայի կողմը: Հայտնվում է 2 տեսակի մարդ՝ մարդ սուբյեկտ,որի համար ձեռքի աշխատանքից ազատագրումը նշանակում է բարձրանալու հնարավորություն մշակույթի ձեռքբերումների հիման վրա և մարդ օբյեկտ՝ ձգտող դուրս գալու տեխնոլոգիական գործընթացի շրջանակներից:Ռացիոնալության օբյեկտ ծառայում է մեքենան, մեքենային տեխնոլոգիաները:Իր գործունեության ընթացքում մարդ-օբյեկտը ղեկավարվում է տեխնոլոգիական գործընթացով կամ նրա մասով, նրա մոտ ի հայտ է գալիս սուբյեկտիվության պատրանք:Նա իրեն համարում է սեփական կենցաղի սուբյեկտ:Երկրորդ փուլի հետ մարդկային սուբյեկտիվությանը առաջ են քաշվում այլ պահանջներ: Մարդը կարող է ապրել, շարունակել սերունդը և հարմոնիայից դուրս՝ իր առաջ այստեղ չդնելով բարձր նպատակները:Նա գործում և արարում է ապահովագրության և կոմֆորտի պայմաններում, ազատության, որը գալիս է սեփական անհրաժեշտության քաղաքակրթական գիտակցությունից:

Երրորդ փուլը կապված է աշխատանքի ավտոմատացման հետ, որի սահմաններում աշխատանքը չի սահմանափակվում մարդու ֆիզիկական ու ֆիզիոլոգիական հնարավորություններով:Այստեղ էլ առաջանում է փաստացի նոր սոցիոմշակութային իրավիճակ,որի կորիզը դառնում է տեխնոկրատիան՝ տեխնոլոգիական մասնագետների քաղաքական իշխանությունը, ինժիներային և գիտական ինտելեգենցիան,որը ապրում է հավատով կենցաղում և ամենուր տեխնոլոգիական դրախտ ստեղծելու բարձր առաքելությամբ տոգորված:

Չորրորդ էտապը կապված է հատուկ որակի ինֆորմացիոն համակարգերի ի հայտ գալու հետ: Նոր տիպի ինֆորմացիոն համակարգերի ծնունդը հնարավոր դարձավ տեխնոլոգիայի ոլորտում առաջատար ձեռքբերումների շնորհիվ և դարձավ տեխնիկայի աշխարհում մեծ իրադարձություն:Ռոբոտների արտադրանքը, որոնք կարող են շարժվել և գործողություններ կատարել, կապված մանիպուլյացիայի հետ, սկսվել է 60-ական թթ-ից:Իսկ չէ՞ որ ռոբոտը

պատմության մեջ առաջին մեքենան է, որը ոչ միայն փոխարինել է մարդկային ձեռքերը, այլ մարդկային ինտելեկտի որոշ ֆունկցիաներ:

Իսկ ինչպիսի՞ն է տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության մշակութային կյանքի վրա, ինչպե՞ս է իրագործվում տեխնոլոգիաների ու մշակույթի փոխադարձ կապը:Մշակութային առումով ընդունված է առանձնացնել 2 պատճառներ, որոնք տեխնոլոգիական գործունեությանը տվել են բարձր հեղինակություն, ինչը բերել է նման մեծ արդյունքների:

Առաջին հերթին այն արդեն Վերածննդի դարաշրջանում հայտնված պատկերացումն է մարդու մասին որպես բնության ակտիվ ձևափոխողի:

Երկրորդ, Լուսավորության շրջանում հաստատված գաղափարներն են այն մասին, որ բանականությունը ակտիվ դերակատարում ունի արտաքին աշխարհի վրա:[1]

Մասսայականության գլխավոր նախապայման դարձավ ստանդարտիզացիան, որն ընդգգրկեց արտադրական բնագավառը և կյանքի կերպը՝ ներառելով մասսայական մշակույթը:Որոշ տեսաբաններ մտածում են տեխնոլոգիաները կապել հատուկ միջոցների թվին, որոնք թեթևացնում են աշխատանքը ու այն ավելի արդյունավետ դարձնում:

Մյուսները հնարավոր են համարում տեխնոլոգիան դիտարկել որպես մարդկային գաղափարների ու նպատակների արդյունք՝ մշակույթի ոլորտում ձևավորվող:Փաստորեն մի կողմից տեխ-նոլոգիայի առաքելությունը նրանում է,որ այն ապահովում է մարդկային պահանջմունքների բավարարումը և առանց նրա մարդու գոյությունը կդառնար պրիմիտիվ:Բայց դրանով հանդերձ տեխնոլոգիան ներկայանում է որպես մարդու ելքի միջոց, առաջնահերթ պահանջմունքներ ու հնարավորություններ, որոնք էլ կապված են մշակույթի հետ: Հոգևոր պահանջմունքները բերեցին կոթողային ճարտարապետության կամ քանդակագործության ստեղծմանը՝ արտացոլված բուրգերի մեջ, տաճարներում, հուշարձաններում և այլուր:Տեխնոլոգիաները ու տրանսպորտային միջոցները ծառայում են ոչ միայն անհրաժեշտ ապրանքների տեղափոխման համար, այլ ժողովուրդների մեջ շփումների համար:

Տեխնոլոգիայի զարգացման մեջ հատուկ տեղ զբաղեցնում է ինֆորմացիոն գործընթացը:Բնությունից օտարումը բերում է մարդու կյանքում ռացիոնալության դոմինանտությանը:

Հետաքրքրական են Օրտեգա-Ի-Գասսետի դիտարկումները ջենտլմեն անձնավորության ձևավորման վրա տեխնիկայի ունեցած ազդեցության մասին, որի գլխավոր հատկանիշ համարվում է կյանիքի ազատության զգացումը՝

հիմնված հանգամանքների վրա իշխանության դոմինանտության վրա:[1] Տեխնոլոգիան մշակույթի հատուկ երևույթ է:Այսօր տարածում է ստանում այն միտքը,որ տեխնոլոգիան ոչ միայն ներառված է մշակույթի և հոգեբանության մեջ այլ առաջատար է ժամանակակից քաղաքականությունում, ինչն էլ տեխնոլոգիան բերում է ռացիոնալ գերազանցության:Մեքենան կուռք դարձավ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին:Տեխնոլոգիայի օգնությամբ մարդը ստեղծել է երկրորդ արհեստական միջավայր, իրեն առանձնացրել է բնությունից:Ժամանակակից հասարակությունը անբաժան է տեխնոլոգիաներից. Տեխնոլոգիան ամենուր է:Գիտատեխնիկական հանգամանքը ընկած է հասարակության մշակույթի և հոգեբանության հիմքում:Տեխնիկայի ազդեցությունը մարդկային մշակույթի վրա միակերպ չէ, այն իր հետ բերում է հետևանքներ,որոնք ոչ միշտ կարող են դրական:Իր առանձնահատկություններով մի ուրույն բարդ աշխարհ է ներկայանում համակարգիչը:Համակարգչի հետ շփումը ուին բազմաթիվ դրական և բացասական կողմեր: Նախ և առաջ նշենք դրական կողմերը:Առաջինը ինտերակտիվությունն է:Ինֆորմացիայի ստացման գործընթացը դարձել է ավտոնոմ:Մենք կարող ենք անհրաժեշտ ինֆորմացիա ստանալ այն ժամանակ, երբ այն հարկավոր է:Ընդհանուր առմամբ ժամանակակից մարդիկ համակարգչի հետ շփվում են առավել ակտիվ, քան հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի հետ, որը խոսում է ինֆորմացիայի վերոհիշյալ աղբյուրի առավելության մասին ինֆորմացիայի մնացած միջոցներից:ABC ընկերության իրականացրած հարցումների համաձայն պարզ է դարձել, որ վերջին ժամանակներս ամերիկացիների համար նորությունների աղբյուր ավելի հաճախ դառնում են ոչ թե հեռուստատեսությունը և թերթը, այլ ինտերնետի ինֆորմացիոն սայտերը:Ինչպես պարզ դարձավ հարցման արդյունքում հարցվողների գերակշռող մասը կանոնավոր նորություն է ստանում ինտերնետից, այն դեպքում, երբ 1999թ-ին դա անում էր միայն 8%-ը:[2]

Համակարգչի օգնությամբ մենք կարող ենք հաղորդակցվել իրական մարդկանց հետ (էլեկտրոնային փոստի միջոցով, չատում շփման շնորհիվ):Իսկ գլխավորապես մենք ինքնաարտահայտման մեզ ազատություն ենք ստանում՝ բացարձակ ռիսկի չդիմելով:Հոլանդացի հոգեբան Ալֆրեդ Լագեն Ինտեչնետի միջոցով մշակել է հոգեթերապիայի նոր միջոց: Նրա խոսքերի համաձայն շատ հիվանդների համար ավելի դյուրին է բժշկի հետ շփվել համակարգչի միջոցով:[1] Երկխոսության վստահելիությունը և անկեղծությունը այդ դեպքում ավելի հեշտ է ձեռք բերվում:Ինտերնետի միջոցով բուժում անցել են արդեն 300 մարդ հետտրավմատիկ նյարդային ախտորոշմամբ:Մեթոդի հեղինակը համարում է,որ

նման բուժման էֆեկտիվությունը 2-3 անգամ բարձր է, քան սովորական հոգեթերապիայի ընթացքում: Համակարգչի և կապի նոր միջոցների զարգացմամբ մարդկությունը անցում է կատարել կոմունիկացիայի բոլորովին նոր մակարդակի՝ յուրաքանչյուրի համար հասանելի է դարձել այն, ինչ անցյալում անհասանելիր էր: Ինտերնետից օգտվում է անգամ եկեղեցին:Վատիկանը հրատարակեց կարգավորող փաստաթուղթ. Կրոնի քարոզումը Ինտերնետի միջոցով ճանաչված են հասանելի, իսկ մեղքերի թողություն կատարելը՝ ոչ:Շտեֆան Խայնզեն, եկեղեցիներից մեկի սարկավագը, սկսեց քարոզել անգամ բջջային հեռախոսով:2 Այս ծառայությանը դիմեցին հազարավոր մարդիկ:

Այս կերպ համակարգիչների, Ինտերնետի միջոցով իրագործվում են հետևյալ հնարավորությունները՝

- ուսուցումը
-շփում
- ստեղծագործում
- հաճույք
- բուժում

Կոմպյուտերացումը բերել է շատ օգտակար բաներ և մեր նյարդային համակարգի համար:

Թե որքան օգտակար կլինի այդ նորամուծությունը, կախված է միայն մեզանից:Չէ՞ որ դեռևս Պարացելսը ասելկ է. «Աշխարհում ամեն ինչ թույն է, աշխարհում ամեն ինչ դեղորայք է:Այս կամ այն կախված է չափաբաժնից, դոզայից»:[3] Այս կարգախոսը ճիշտ է և համակարգչի հետ կապված:

Համակարգիչները մեր կյանքում զբաղեցնում են իրենց պատվավոր տեղը և դա կապված է ոչ այնքան նրա կատարելագործման, որքան մեր ներքին մոդերնիզացիայի շնորհիվ:

Համակարգչի հետ աշխատելիս վնասակար հետևանքներ են՝ տեսողության վատթարացում, մտավոր լարվածություն, ինֆորմացիոն ծանրաբեռնվածություն, իրական և համակարգչային աշխարհի միահյուսում և այլն:

Էլեկտրոնիկայի բնագավառում վերջին տարիների ոչ մի նորամուծություն ԱՄՆ-ում այնպիսի քննարկումների առիթ չհանդիսացավ, ինչպես համակարգչային խաղերը:Ինչպես նշում են սոցիոլոգՃ հոգեբանները, կոմպյուտերիզացիայի խնդրի հետազոտողները, խոշոր երկրներում հենց խաղեր են կարևոր դեր խաղացել կոմպյուտերային մշակույթի տարածման համար:[1]

Խաղերի դեմ էր ուղղված ավագ թշնամանքի, անբարյացակամության առաջին հոսանքը և այդ նույն խաղերն էլ հենց առաջ բերեցին երիտասարդության հիացմունքը:Մեր օրերում խաղերը դիտվում են իբրև առաջնային աստիճան մարդ-մեքենա փոխհարաբերության աշխարհ ներթափանցելու համար:Խաղերի ընթացքում խաղացողի և մեքենայի միջև ստեղծվում է տարբեր կապերի բարդ ամբողջություն:

Ինչպես կարծում է ռուս հոգեբան Ի.Բուրլակովը, խաղի ժամանակ մարդ գտնվում է անգիտակից վիճակում, քանի որ գիտակցությունը նրան այդ ժամանակ հարկավոր չէ:Խաղի ընթացքում նա ընկնում է տրանսի մեջ. Այդ ժամանակ աշխատում են ուղեղի էմոցիոնալ հատվածները,որոնք կարող են անջատված լինել սովորական գործունեության ժամանակ (ընդ որում հին հասարակություններին միշտ էլ հատուկ են եղել ռիտուալներ, որոնք մարդուն գցում են տրանսի մեջ. Սովորաբար դրանք ուղեկցվում են երգ ու պարով, կրակով): Մեր աշխարհում միֆիոլոգիան գործողություններին մմմուտք՝ տրանս առաջացնող, կարելի է խաղի միջոցով:Խաղը շոշափում է խոր արխետիպեր, բարդ ենթագիտակցաբար կերպարներ, որոն սկզբնապես մարդուն բնորոշ են եղել:Մենք բախվում ենք հրեշների և այլ «թշնամիների» ագրեսիվ լաբիրինթում», որտեղ ոչ միայն հանդիպում ենք մեր «մահը», այլ ապրում ենք մեր «վերածնունդը», այլ կերպ ասած մենք դառնում ենք «հերոսներ»: Իրական կյանքում շատ մարդկանց դա չի բավարարում:«Չկա ավելի հիմար և գրավիչ բան»,- ասում են խաղերի սիրահարները:

Պետք չէ մեքենայի մեջ տեսնել մեր լավագույն և ամենահետաքրքիր ընկերոջը, չնայած որ այն ապահովում է «թեթև» հաճելի էմոցիաներ: Հարկավոր է համակարգչին վերաբերվել այնպես, ինչպես մնացած մեխանիզմներին, որոնք կոչված են թեթևացնելու մեր կյանքը, բայց չփոխարինելու այն:Մարդը մեքենայի հետ ավելի ժամանակ է անցկացնում՝ ավելի ու ավելի շատ տարվելով՝ մոռանալով մնացած կյանքի մասին:Համակարգիչը սկսում է փոխարինել կենդանի շփումը, կենդանի մարդկանց:Դա տալիս է այն էմոցիաները,որոնք պահանջվում են:Լավ է դա,թե վատ, որոշվում է մեզանից յուրաքանչյուրը: Սա կարող է մարդուն տանել միայնության:Բացի այդ ճապոնացի գիտնականների հավաստմամբ վաղ տարիքում համակարգչային խաղերով տարածվածությունը հղի է լուրջ վտանգներով՝ կապված ուղեղի հետ առաջացած խանգարումների հետ:[1] Հետազոտվել են երեխաների 2 խմբեր՝ մի մասը զբաղվել է պարզ մաթեմատիկական առաջադրանքների կատարմամբ, մյուսները զվարճանում էին խաղերի օգնությամբ:Արդյունքների համեմատությունից հետո բացահայտվեց,որ

համակարգչային խաղերը քիչ են ծանրաբեռնում ուղեղը, մ արդուց պահանջվում է պարզագույն ռեակցիաներ, դրանք խթանում են միայն ուղեղի այն գոտիներին, որոնք պատասխանում են տեսողության և շարժման համար՝ գրեթե չշոշափելով մնացած կարևոր բաժինները: Այսպիսով ուղեղի շատ բաժիններ դառնում են չզարգացած:Նման մարդիկ ունենում են վատ զարգացած հիշողություն,դժվար են սովորում և անընդունակ են դառնում ճնշել սեփական ագրեսիվ մղումները:

Անցկացված հետազոտությունների արդյունքում գերմանացի գիտնական Կլայս Մատիակը եկել է այն համոզման, որ բնության տեսարանները վիդեոխաղերի ժամանակ շառայում են յուրահատուկ ազդակ,որը կարող է բերել սովորույթի դեպքի բռնությունները:

Մատիակը գտնում է,որ վիդեոխաղերը մարդկանց ավելի ագրեսիվ են դարձնում:[2]

Այսպիսով վտանգավոր են արդյոք համակարգչային խաղերը թէե ոչ՝ կապված է դոզայից և ունակությամբ ժամանակին կանգ առնել:Պետք չէ ֆետիշացնել համակարգիչը, հարկավոր է օգտվել նրա դրական կողմերից և հնարավորինս հեռու մնալ բացասական ազդեցությունից:

Իսկ սովորելու տեսանկյունից համակարգիչը և Ինտերնետը սովորողի առջև բացում են լայն դռներ: Ցանկացած ինֆորմացիա հասանելի է այսօր և հիմա: Հարկավոր է միայն զանազանել,տարբերակել ինֆորմացիան և սովորել,սովորել…

ԳԼՈՒԽ 2. Տեխնոլոգիայի և մարդկության ապագան

Այսօր չկա մի զարգացած հասարակություն, որն ապրի առանց տեխնոլոգիաների: Տեխնոլոգիայի նոր ստեղծման պահին շատ մեծ է հասարակության դերը, որը կարող է ընդունել այդ տեխնոլոգիան, սակայն դրա վրա բազմաթիվ սահմանափակումներ դնել: Միևնույն ժամանակ շատ դժվար է մերժել տեխնոլոգիան, որն արդեն արմատացած է հասարակության մեջ:Մուտքի առաջին շրջանում գերադասելի դիրք ունի հասարակությունը, բայց երբ արդեն այն հասել է մի կետի, այդ նորարարությունը կանգնեցնել և մերժել, հնարավոր չէ:Վերը նշվածից կարող ենք հանգել հետևյալ եզրակացության, որ առաջին փուլում տեխնոլոգիան նորարարություն է և այս շրջանում տիրապետող է հասարակությունը, երկրորդ փուլում կարող է տիրապետող լինել տեխնոլոգիան: Այսպիսով մի պահ կարող է գերիշխող լինել հասարակությունը, իսկ մի այլ դեպքում՝ տեխնոլոգիան:Հասարակությունը միշտ էլ պետք է ուշադիր լինի տեխնոլոգիաների հետ վարվեցողության ժամանակ:Մարդիկ հավատում էին, որ իրենք կարող են ստեղծել նոր հասարակություն, նոր աշխարհ, սակայն արդյոնքում ստեղծվել է մի հասարակություն, որն արդեն մարդկային չէ, այլ տեխնոլոգիական:Մարդու ճակատագրում հայտնվում են ոչ միայն նոր տեխնոլոգիաներ, այլև նոր տիեզերք:Նոր ժամանակի մարդը առաջին տեղում դնում է տեխնոլոգիաները:Այժմ հարց է ծագում՝ հնարավոր է արդյոք մարդկության ապագան առանց տեխնոլոգիաների կամ ինչպիսին կլինի տեխնիկայի և մարդկության ապագան:Այս հարցադրումները խիստ կարևոր են, քանի որ մարդիք պետք է իմանան, թե իրենց ինչ է սպասվում ապագայում:

Սկզբնապես մարդը կախվածություն ուներ բնությունից, բայց ահա սկսվում է մարդու նոր կախվածություն նոր բնությունից՝ տեխնոլոգիական-մեքենայական կախվածություն:Մարդը դեռ լիովին չի ադապտացվել այն նոր իրականությանը, որը բացվում է տեխնոլոգիաների և մեքենայի միջոցով:Նա չգիտի ի վիչակի կլինի արդյոք շնչել նոր էլեկտրական և ռադիոակտիվ մթնոլորտում, նոր սառը,

մետաղական իրականության մեջ՝ զուրկ հոգևոր ջերմությունից:Մենք դեռևս չգիտենք,որքան կործանարար է մարդու համար այն մթնոլորտը,որը ստեղծվում է սեփական տեխնոլոգիական բացահայտումներով և գյուտերով: Տեխնոլոգիաները պոկում են մարդուն բնությունից և մյուս աշխարհներից:Այն ժամանակվանից,երբ Աստված արտաքսեց մարդուն դրախտից, նա փորձեց վերգտնել դրախտը և դրախտը վերգտնելու համար ստեղծում է տեխնիկան, բայց այն վերածվում է դժոխքի,քանի որ օտարվում է մարդուց:Սկզբում մարդ տեխնիկան պատկերացնում էր մարդու տեսքով:Այսօր տեխնիկան անմարդկային է, տեխնիկան փոխարինում է մարդու առանձին մասերը, օրինակի համար անձրևանոցը մարդու գլխարկն է, մեքենայի անիվը՝ ոտքերը և այլն:

Տեխնիկան մշակված, հաջորդական քայլերի կամ գործողությունների մի համալիր է, որը անմշակ երևույթը կամ իրը դարձնում է մշակված:Մեքենան,որը կատարում է այս կամ այն գործողությունները,մարդու կողմից ստեղծված մի գործիք է:Դրա նպատակը մարդու աշխատանքին հետևելն է, նրա աշխատանքը ավելի ստեղծագործական դարձնելը,մարդու բարեկեցությունը ապահովելը:Նշանավոր չին փիլիսոփա Կոնֆուցիոսը հակառակ կարծիքին էր, որ տեխնոլոգիաները ֆիզիկապես և կամային առումով թուլացնում են մարդկանց:Մի այլ փիլիսոփա Շպենգլերը գրեթե նման մտքեր է արտահայտել տեխնոլոգիաների վերաբերյալ:Իր «Մարդը և տեխնիկան միշտ եղել է միջոց, այլ ոչ թե նպատակ:Տեխնիկան կյանք չի կարող լինել:Դա կլինի ռոբոտային կյանք:[1] Այսպիսով մի կողմից տեխնոլոգիաները օգնում են մարդկանց, շատ հաճախ նրանց փոխարեն անում են տարբեր գործողություններ, օրինակ լվացքի մեքենան, փոշեծծիչը և այլն:Մեքենան մեծացնում է արտադրանքը, կրճատում է աշխատանքային ժամը, թեթևացնում է աշխատանքը և ընդհանրապես նշանավորվում է մարդու հաղթանակը բնության ուժերի նկատմամբ:Սակայն սրա հետ մեկտեղ մարդը դառնում է մեքենայի ստրուկը,կցորդը:Ընդհանուր առմամբ մարդկության պրոգրեսը անմիջականորեն կապված է գիտատեխնիկական հեղափոխության հետ:Բերդյաևը համարում է, որ մարդկությունը կանգնած է գլխավոր պարադոքսի առջև «առանց տեխնոլոգիաների հնարավոր չէ մշակույթը, նրա հետ է կապված հենց մշակույթի առաջացումը և տեխնիկայի վերջնական հաղթանակը մշակույթում, սակայն մուտքը տեխնոլոգիական դարաշրջան մշակույթը տանում է կործանման»:[1]

Տեխնոլոգիաները բացում են իրականության նոր աստիճան և այդ իրականությունը մարդու գիտակցությունն է:Թեյլորի համակարգը աշխատանքի ռացիոնալիզացիայի ծայրահեղ ձևն է, բայց այն մարդուն վերածում է

կատարելագործված մեքենայի:Մեքենան ուզում է,որպեսզի մարդ ընդունի նրա կերպարանքը,բայց մարդը Աստծո կերպարանքով է և չի կարող դառնալ մեքենայի նման:Կյանքի տեխնիզացիան ոչնչացնում է հին մշակույթի գեղեցկությունը,հին կենցաղը:Կյանքի մասսայական տեխնիկական կազմակերպումը վերացնում է ցանկացած անհատականացվածություն, ցանկացած ինքնատիպություն,ամեն ինչ արվում է անդեմ-մասսայական կերծարից զրկված:Այդ դարաշրջանի արտադրանքը մասսայական է և անանուն:Մեքենան իր բնույթով հակահումանիստական է:

Արդյո՞ք տեխնոլոգիաները չեզոք են:

Զենքը մարդ չի սպանում, մարդիկ են սպանում մարդկանց, բայց զենքի առկայությունը մի գործիք է,որը կարող է փոխել մարդու վարքը:Տեխնոլոգիաները դադարում են չեզոք մնալ, այն մ արդուն դարձնում է կոսմիուրգ:Այն զենքերի համեմատությամբ, որը ժամանակակից տեխնոլոգիաները տալիս են մարդու ձեռին, նրա նախնական գործիքները թվում են խաղալիքներ:Այն հատկապես երևում է պատերազմի տեխնիկայի վրա:

Իր կենցաղի բոլոր ոլորտներում մարդը շրջապատված կլինի տեխնիկայի ուժերով:Փաստորեն հետագայում կարող է լինել մարդկանց ոչ մեծ քանակություն,որոնք կտիրապետեն տեխնիկական գյուտերի գաղտնիքներին և բռնապետի իր իշխանության տակ պահել ողջ մարդկությանը:

Մեծ վտանգ է ներկայացնում մատչելի ինֆորմացիայի հսկայական քանակությունը, մատչելիությունը առավել խլում է մարդուց անհրաժեշտությունը իմաստավորել այն,ինչ ինքը լսել է կամ կարդացել:Համակարգչի շուրջ գործունեության կոնցեպցիան,նշում է Ա.Կինգը,- կնպաստի այն բանին, որ ընտանիքը գամված կլինի մի վայրում, այնպես ինչպես այն այժմ է գտնում հեռուստացույցի հետ կապված, չնայած ավելի մեծ քանակությամբ:

Մարդկային ուղեղը էվոլյուցիա է ապրել՝ զարգացման ընթացքում ձեռք բերելով այնպիսի հմտություններ և ունակություններ, որոնց մասին նախկինում երազել անգամ չէր կարող:Նախամարդը իր ձեռքի տակ միայն ուներ օգտագործման պարզագույն գործիքներ,որոնք ծառայում էին նրան,իսկ այսօր տեխնոլոգիաները զարգանալով այնպիսի կատարելության են հասել,որ թվում է, պատրաստ են հավակնել ավելին շատ կարողությունների, քան ինքը՝ մարդը:Ովքե՞ր ենք մենք, ո՞րն է մեր տեղը Տիեզերքում:Մարդու կողմից ստեղծվող ռոբոտները կարող են փոխարինել նրան գրեթե ամենուր:Համակարգիչը կարող է վերարտադրել մարդկային ուղեղի բոլոր հնարավորությունները:Քլարքի գրքում քննության առարկ վերցված համակարգիչ ՀԵԼ-900-ը ներկայանում է որպես մարդու

ստեղծած մեծագույն գլուխգործոցներից, մարդը իր ստեղծագործության, այսինքն համակարգչի հետ շախմատ է խաղում և պարտվում:Վերոհիշյալ ռոբոտ-համակարգիչը խնդրում է մարդուն ցույց տալ նրա ձեռքով նկարած նկարները և փորձում է այնտեղ թերություններ տեսնել:[1]

Զգու՞մ է արդյոք համակարգիչը ինչ որ բան,կա՞ արդյոք համակարգչի մեջ իսկական զգացմունքներ, այս հարցին դեռ ոչ ոք չի կարող պատասխանել:Երկարատև թռիչքի ընթացքում ստեղծվում է հատուկ երկխոսություն մարդու և մեքենայի միջև, մարդը հարցնում է համակարգչին,թե արդյոք մարդիկ են նրան կառավարում և համակարգիչը պատասխանում է,որ ինքը կատարյալ է: Համակարգիչները ուզում են որքան հնարավոր է օգտակար լինել մարդկությանը:Եվ նրանցից ոչ ոք երբեք չի սխալվել, նրանք այնքան կատարյալ են,որ պարզապես ունակ չեն սխալների:Իսկ եթե ինչ որ բան այն չէ,դա մարդու սխալն է և ոչ երբեք մեքենայի, մեքենան երբեք չի սխալվել:Ռոբոտը մշտապես կատարում է մարդու հրահանգները:Մեքենան ասում է,որ ուզում է օգնել մարդուն:Մեքենայի այս հավակնությունները հունից հանում են մարդուն և նրանք որոշում են անջատել մեքենայի ուղեղային ֆունկցիան:Մեքենան հասկանում է,քանի որ նրանց շրթունքներից կարդացել էր իրեն վրա հասնող վտանգի մասին և գիտեր,որ մարդը ուզում է անջատել իրեն:Սակայն մարդ հասնում է վերջնական հաղթանակի և այդժամ արդեն հնչում է մեքենայի աղեկտուր աղաչանքը, որպեսզի մարդը դադարեցնի իր գործողությունները,քանի որ ինքը կորցնում է գիտակցությունը, զգում է դա և ամեն անգամ խոսում է իր վախի մասին:Սա ցուցում է այն մասին, որ մարդ ունի առավելություններ, քանի որ ինքն է արարիչը,իսկ մեքենան այդ արարման արդյունքն է:Այսպիսով վերջնական հաղթանակը պատկանում է մարդուն:Ուրեմն հարկավոր է օգուտ քաղել այս նորարարությունից և այն օգտագործել ի շահ մարդուն հատկապես ուսուցման հարցում: Որքան խելացի կկիրառենք այս, այնքան դրա արդյունքը ահռելի,հսկայական կլինի և սովորողն էլ կլինի հոգեբանական գերազանց վիճակում:

ՎԵՐՁԱԲԱՆ

21-րդ դարում տեխ՝նոլոգիաների բուռն զարգացումը թերևս պայմանավորված է դրանց անհրաժեշտությամբ:Գիտատեխնիկական ոլորտում պայթունը բերեց նրան,որ բարձր տեխնոլոգիաները դարձան գլոբալ պատմամշակութային փաստ՝ մարդկության կերպը և նրա ճակատագիրը որոշող:Իրականում մարդը գնալով դառնում է իր իսկ կողմից ստեղծած տեխնոլոգիական աշխարհի մի մասը:Բնական է,որ տեխնոլոգիաները շատ դեպքերում որոշում են հասարակական կապերի բնույթը և իրենց կնիքն են թողնում մշակույթի վրա ամբողջությամբ:Տեխնոլոգիան մշակույթի հատուկ երևույթ, այն անբաժան է մշակութային ոլորտից,որի ծնունդնէ:Տեխնոլոգիան մեր կյանքի մասն է,մեր զրուցակիցը,մեր արվեստն ու գիտությունը, քաղաքականությունը և ինդուստրիան, մեր ակնոցը դեպի աշխարհ. Այն ամենուր է:Տեխնոլոգիան առայժմ մշակույթի հիմնական չափորոշիչն է, նրա զարգացման առաջատար ցուցիչը:

Երեխաները ծնվում են բազմաբնույթ տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում,որ սփռում են տարբեր տեսակի տեղեկատվական տեխնոլոգիաները՝ ռադիոն,հեռուստատեսությունը, վիդեոն, նոր տեսակի խաղերը և այլն:

Մեդիատեխնոլոգիաները հանդիսանում են հաղորդակցման հնարավորություններից մեկը: Մեդիատեխնոլոգիաների փոփոխությունը տանում է մշակույթի փոփոխությանը: Այսօր էլեկտրոնային-թվային մեդիայի (հեռուստատեսություն և Ինտերնետ) դարաշրջանն է:Զանգվածային մեդիան նախ և առաջ հեռուստացույցն է,առաջին զանգվածային մեդիան թերթերն են,իսկ այն հարցին՝ Ինտերնետը զանգվածային միջոց է, թե ոչ պատասխանը միանծանակ է՝ ոչ, քանի որ Ինտերնետը թույլ է տալիս ունենալ սեփական տեղեկատվական աղբյուրի մի համակարգ և յուրաքանչյուր մարդ կարող է իր համար վերցնել այն ինֆորմացիան, որն իրեն պետք է:Համակարգիչը որոշ իմաստով փոխում է իրադրությունը, զանգվածային մեդիան, որը սկսվել է թերթերով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և որը մարդուն դարձրել է ավելի

պասիվ, քանի որ եթե հաղորդակցությունը միակողմանի է, մենք ավելի քիչ հնարավորություն ենք ունենում մտածելու:Համակարգիչը մարդու հետ զրուցելու հնարավորություն է ստեղծում: Այն ձևավորում է բաց հասարակություն: Անջատված հեռուստացույցը չունի ոչինչ, անջատված համակարգիչը իր մեջ ունի ծրագրեր, պահված ծրագրերը:Համակարգիչն ունի ավելին՝ մենք կարող ենք փոխել այդ ծրագրերը:Փաստորեն համակարգիչը մարդու ստեղծած գործիքներից է,բայց մնացած բոլոր գործիքներից տարբերվում է նրանով,որ այն վերամշակում, յուրացնում է ինֆորմացիան և կարող է ծրագրավորվել շատ աշխատանքների համար:Այսպես սովորողին քիչ բան է մնում:Պարզապես յուրացնել այս ինֆորմացիան, պետք չէ նոր հեծանիվ հնարել:

Տեխնոլոգիայի պածտամունքը բացահայտում է մարդու զարգացման սոցիալ մշակութային ոչ ադեկվատ բնույթը, քանի որ ցանկացած երևույթի գերագնահատումը չի կարող դիտվել իբրև դրական երևույթ: Դա նման է ինչ որ մի բան չափից ավելին կիրառելուն, օգտագործելուն, որն էլ անխուսափելիորեն կարող է հանգեցնել տվյալ երևույթի կախվածության:Օրինակ Ինտերնետ-կախվածությունը հիվանդություն է:Այն ստանում է առավել մեծ տարածում և դրսևորման աստիչաններով իրավմամբ կարող է մրցակցել թմրադեղերի, ալկոհոլի և խաղամոլության նկատմամբ ունեցած մոլուցքի հետ:Մարդիկ կարող են օրնիբուն հեռուստացույց նայել, որի դեպքում նրանց ուղեղը ամբողջովին անջատվում է և անկարող է լինում որևէ լուրջ գործի:Ճապոնացին օրական միջին հաշվով 9 ժամ նայում է էկրանին:

Ինչև՝, նման օրինակները բազմապիսի են:Այնպես որ այս ամենը իրապես հարկավոր է որակել որպես նոր հիվանդություն, այն էլ շայրաստիճան վտջանգավոր, որից բուժումը շատ բարդ է:

Գլխավորը ինչ ներմուծեցին հեռախոսը, ռադիոն, հեռուստացույցը, համակարգիչը մշակույթի մեջ, իռացիոնալությունն է:Այդ մշակութային փոփոխությունները առաջարկում են աշխարհընկալման այլ տարբերակներ, կյանքի այն ձևեր:

Փիլիսոփաները և ֆուտուրոլոգները վաղուց են անհանգստացել տեխնիկայից սպասվող վտանգի և օգուտների, տեխնիկան սանձահարելու հնարավոր եղանակների մասին:Փաստ է, որ տեխնիկան գնալով պարուրում է մարդուն և ազատությունը գնալով դիտվում է ազատություն տեխնիկայից կամ տեխնիկայի միջոցով մարդուն բռնացող հասարակությունից:

Եվ որպեսզի այդ ամենը տեղի չունենա, մենք պետք է համաձայնության գանք նոր տեխնոլոգիաների հետ, որպեսզի չդառնանք նրանց գերին:Միշտ պետք է հիշել, որ մարդ-մեքենա հարաբերության մեջ առաջատար կողմը մարդն է:Մարդն

է գործարկում մեքենան և ոչ թե վերջինս է ղեկավարում մարդուն:Տեխնոլոգիաները մեր գործիքներն են, որոնք նույությամբ կատարում են այն, ինչ իրենց հրամայված է:Ուրեմն զգույշ պետք է լինել մեր հրամաններում և չանել մի բան, ինչը կվնասի մարդուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պ.Ս.Գուրևիչ,Մշակութաբանություն, Երևան,2002թ,էջ76-77
2. Досьв глобальная сеть – Вокруг сжета, 2001, ноябрь, И11 (2734),с.21
3. Интернет- обозрение. Самие распространные интернет-ахери 2004года- техника молодейы, 2005 февраль с. 36-37.
4. Кочетков Г. Б. Могушество и бессилие компьютера:- Компютер- это не роскошь а средство сожершенствования творческих способностей человека.-https://5ka.ru/01/10792/1.html,01.01.2004
5. Новости информационных технолгий. Джинн по имвни Хакер.- Техника молодвжи, 2004, декябрь с.48-51.
6. Лора Гриндстафф. Реалное телевидение и политика сициалного контроля.- массовая культура. М: 2005, s. 78-96
7. Шлыкова О. Б.Ултура Мультимедиа; М: 2004 с. 56.
8. Яроцтлав Чумачков. 3Ян. шЯЛ